ԿԱՏԱՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿԱՏԱՐ

Հայաստանի Հանրապետությունը կարևորում է Պարսից ծոցի երկրների, այդ թվում՝ Կատարի հետ հարաբերությունների զարգացումը: Հայաստանի Հանրապետության և արաբական մի շարք երկրների միջև ներկայումս առկա է արդյունավետ և բազմաբովանդակ փոխգործակցություն, ինչից հետևում է, որ փոխշահավետ բոլոր ոլորտներում ամուր հիմքի վրա կարող են հաջողությամբ զարգանալ նաև հայ-կատարական հարաբերությունները:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության և Կատարի միջև հարաբերությունները վերջին տասնամյակում թևակոխել են զարգացման նոր, ավելի գործնական փուլ: Երկու երկրների միջև ստորագրվել են տարբեր բնագավառներում համագործակցության մասին մի շարք փաստաթղթեր:

! Համաձայն Պարսից ծոցի համագործակցության գլխավոր քարտուղարության Ընդհանուր մաքսային օրենքի՝ Կատարի մաքսային գոտիների համար նախատեսված ապրանքները ենթակա են պարտադիր մաքսային գործառնությունների, իսկ ազատ առևտրի գոտիների համար նախատեսված ապրանքները ազատվում են մաքսային պարտավորությունների կատարումից:

! Պարսից ծոցի համագործակցության գլխավոր քարտուղարության Ընդհանուր մաքսային օրենքով սահմանվում է Կատարի ներմուծման կանոնակարգը: Հետագայում՝ ապրանքները կարող են տեղափոխվել Պարսից ծոցի համագործակցության խորհրդի մաքսային գրասենյակներ՝ թույլատրելով ապրանքների անցումը մեկ անդամ պետությունից մյուսը: Վերոնշյալ ապրանքների ներքին շրջանառության նպատակով պետք է լրացվի արտահանման վիճակագրական հայտարարագիր, որի կրկնօրինակը պետք է ներկայացվի ներմուծող երկրի մաքսային գրասենյակ «Makasa» **կնիքով** (մարման մեխանիզմով)՝ նշանակման վայրում մաքսատուրքի կրկնակի վճարումներից խուսափելու համար: Նման գործարքի իրականացման համար լրացվում է «Ներմուծում Պարսից ծոցի համագործակցության խորհրդի անդամ պետությունից» հայտարարագրի տեսակը:

ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱԿԱԳՆԵՐ

Որպես Պարսից ծոցի համագործակցության խորհրդի անդամ՝ Կատարի կողմից կիրառվում է Պարսից ծոցի համագործակցության խորհրդի միասնական մաքսային սակագինը, որը բաղկացած է չորս տեսակի ադվալորային մաքսատուրքի դրույքաչափերից՝ 0%, 5%, որը հիմնականում կիրառվող դրույքաչափն է, 50% և 100%, որոնք կիրառվում են համապատասխանաբար ալկոհոլի և ծխախոտի նկատմամբ: Կիրառվող մաքսատուրքերի դրույքաչափերի մոտ 97%-ը ադվալորային են: Մաքսատուրքերը հիմնվում են ներմուծման CIF (արժեքը, ապահովագրումն ու փոխադրումը) արժեքի վրա: Հետևաբար, ներմուծման մաքսատուրքը և հարկերը հաշվարկվում են փոխադրման վերջնական արժեքի նկատմամբ, որն ընդգրկում է ներմուծվող ապրանքների արժեքը, բեռնափոխադրման և ապահովագրության ծախսերը:

Արդյունաբերական ապրանքների մեծ մասի նկատմամբ կիրառվում է ներմուծման մաքսատուրքի 5% դրույքաչափ:Երկակի օգտագործման ապրանքների արտահանումը իրականացվում է թույլտվության (լիցենզիայի) առկայության դեպքում: Առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար անցեք հետևյալ հղումներով՝

[Պարսից ծոցի համագործակցության խորհրդի քարտուղարության ընդհանուր մաքսային օրենքը]

https://www.fca.gov.ae/en/HomeRightMenu/Pages/hscodeDefinition.aspx?SelectedTab=5

[Պարսից ծոցի համագործակցության խորհրդի անդամ պետությունների միասնական մաքսային սակագինը]

ԱՅԼ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ՝

http://www.gcc-sg.org/en-us/Pages/default.aspx

[Պարսից ծոցի համագործակցության խորհրդի գլխավոր քարտուղարություն]

https://www.export.gov/article?id=Qatar-Customs-Regulations

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության առևտրաշրջանառությունը Կատարի հետ 2016 թվականին կազմել է 468,3 հազ ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 45,2%-ով (2015 թվականին կազմել է 322,5 հազ. ԱՄՆ դոլար): 2016 թվականին արտահանումը Հայաստանի Հանրապետությունից Կատար կազմել է 14,7 հազ ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 3,5 անգամ (2015 թվականին կազմել է 4,7 հազ ԱՄՆ դոլար): 2016 թվականին Կատարից Հայաստանի Հանրապետություն ներմուծումը, ըստ ծագման երկրի հատկանիշի, կազմել է 453,6 հազ ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 42,5%-ով (2015 թվականին կազմել է 318,3 մլն.ԱՄՆ դոլար), ըստ առևտուր անող երկրի հատկանիշի ներմուծումը կազմել է 430,2 հազ ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 84,9%-ով (2015 թվականի կազմել է 232,7 հազ ԱՄՆ դոլար):

2016 թվականին Հայաստանի Հանրապետությունից Կատար արտահանված առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքներն են.

- **կոստյում, ժակետ, զգեստ,**
- **ոչխարի կամ այծի միս,**
- **սև մետաղներից արտադրանք:**

2016 թվականին Կատարից Հայաստանի Հանրապետություն ներմուծված առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքներն են.

- **Էթիլենի պոլիմերներ,**
- **օգտագործված հագուստ և արտադրանք օգտագործված,**
- **պլաստմասսայից իրեր ապրանքների փաթեթավորման համար:**